ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/172 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով տեխնիկայի (վերանորոգվող/հիմնանորոգվող 30 դպրոցներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 13.10.2025թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ	mkhitaryangnumner@gmail.com
2	«Անտիգա» ՍՊԸ	antigaantiga05@gmail.com
3	«ԵԼ4008» ՍՊԸ	el4008el@gmail.com
4	«Կոմպասս» ՍՊԸ	compassarmeps@gmail.com
5	«Իքս-Արթ» ՍՊԸ	contact@x-art.am
6	«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	sev-art@inbox.ru
7	«Վիանետ» ՍՊԸ	info@vianet.am
8	«ՍՄԱՐԹ ՓՐՈՔՅՈՒՐՄՆԹ» ՍՊԸ	arminemargaryan070@gmail.com
9	«Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ	meryhakobyan888@gmail.com
10	«Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ	interactive.stf@gmail.com
11	«ԱԷՅ» ՍՊԸ	tenders@aey.am
12	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	yerevan332@gmail.com
13	«Մեգա Սթոր» ՍՊԸ	megastorellc@mail.ru
14	«Գլոբալ Ուան» ՍՊԸ	tender@global-one.am
15	«Կոմպսել» ՍՊԸ	info@compsale.am
16	«ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ	ipsec77@mail.ru

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Հ	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	**«Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ**	6109000	2000000	2400000	
1	2	«Անտիգա» ՍՊԸ	6109000	2100000	2520000	
1	3	«ԵԼ4008» ՍՊԸ	6109000	2310000	2772000	
1	4	«Կոմպասս» ՍՊԸ	6109000	2370000	2844000	
1	5	«Իքս-Արթ» ՍՊԸ	6109000	2855800	3426960	
1	6	«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	6109000	3385000	4062000	
1	7	«Վիանետ» ՍՊԸ	6109000	3650500	4380600	
1	8	«ՍՄԱՐԹ ՓՐՈՔՅՈՒՐՄՆԹ» ՍՊԸ	6109000	4400000	5280000	
1	9	«Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ	6109000	5090000	6108000	
1	10	«Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ	6109000	5090832	6108998.4	
1	11	«ԱԷՅ» ՍՊԸ	6109000	5100000	6120000	Մերժված
1	12	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	6109000	6109000	7330800	Մերժված
3	13	«Մեգա Սթոր» ՍՊԸ	6109000	444444000	533332800	Մերժված
2	1	**«Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ**	6937500	3000000	3600000	
2	2	«Անտիգա» ՍՊԸ	6937500	3385000	4062000	
2	3	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	6937500	3442500	4131000	
2	4	«Կոմպասս» ՍՊԸ	6937500	3825000	4590000	
2	5	«Գլոբալ Ուան» ՍՊԸ	6937500	4300000	5160000	
2	6	«Կոմպսել» ՍՊԸ	6937500	5692000	6830400	
2	7	«Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ	6937500	5780000	6936000	
2	8	«Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ	6937500	5781248	6937497.60	
2	9	«ԱԷՅ» ՍՊԸ	6937500	5800000	6960000	
2	10	«Մեգա Սթոր» ՍՊԸ	6937500	444000000	532800000	Մերժված

3	1	**«Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ**	10200000	4600000	5520000	
3	2	«Անտիգա» ՍՊԸ	10200000	4915250	5898300	
3	3	«Կոմպասս» ՍՊԸ	10200000	5850000	7020000	
3	4	«ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ	10200000	6915250	8298300	
3	5	«Կոմպսել» ՍՊԸ	10200000	7800000	9360000	
3	6	«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	10200000	8499665	10199598	
3	7	«Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ	10200000	8499997	10199996.40	
3	8	«ԱԷՅ» ՍՊԸ	10200000	9000000	10800000	Մերժված
3	9	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	10200000	10200000	12240000	Մերժված
3	10	«Մեգա Սթոր» ՍՊԸ	10200000	444400000000	533280000000	Մերժված

5. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.10.2025թ.

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ ներկայացվածները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- Հավելված 1՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը
- 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար բացակայում է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.10.2025թ.

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ամբողջությամբ չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ մասնավորապես կրկին չեն ներկայացվել Հավելված 1-ը, Հավելված 1.3-ը և ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.1 կետը «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ի հայտը **1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով** գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել՝

- «Անտիգա» ՍՊԸ-ի, «ԵԼ4008» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Իքս-Արթ» ՍՊԸ-ի, «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ի, «Վիանետ» ՍՊԸ-ի, «Սմարթ Փրոքյուրմնթ» ՍՊԸ-ի, «Փ. Սամսար» ՍՊԸ-ի և «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտերը 1-ին չափաբաժնի մասով,
- «Անտիգա» ՍՊԸ-ի, «ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Գլոբալ Ուան» ՍՊԸ-ի, «Կոմպսել» ՍՊԸ-ի, «Փ. Սամսար» ՍՊԸ-ի և «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտերը 2-րդ չափաբաժնի մասով,
- «Անտիգա» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Այփիսեք» ՍՊԸ-ի, «Կոմպսել» ՍՊԸ-ի, «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ի և «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտերը 3-րդ չափաբաժնի մասով,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.3 «ԱԷՅ» ՍՊԸ-ի և «Մեգա Սթոր» ՍՊԸ-ի հայտերը՝ 1-3-րդ, «ՆԵՔՍԱ» ՍՊԸ հայտը՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին

10.1 Գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվանից հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Մխիթարյանս պլյուս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Անահիտ Հակոբյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/